

Համաշխարհային ֆինանսական ճգնաժամի հետևանքները Հայաստանի տնտեսության վրա

PFA-ի արտահերթ զեկույց 02/08

ՀԱՄԱՌՈՏ ԲՈՎԱՆՆԱԿՈՒԹՅՈՒՆ

Սպասվում է, որ ընթացիկ ֆինանսական ճգնաժամը խորը և տևական ազդեցություն է թողնելու աշխարհի բազմաթիվ տնտեսությունների վրա: Ամենայն հավանականությամբ, նրա ազդեցությունները դրսևորվելու են նաև այնպիսի ծայրամասային (պերիֆերիկ) տնտեսության վրա, ինչպիսին Հայաստանի տնտեսությունն է: Թեպետ ճգնաժամի պատճառների և հետևանքների բացահայտման նպատակով իրականացվող ուսումնասիրությունները դեռևս ավարտված չեն, տնտեսագետների համաշխարհային հանրությունն ընդունում է, որ տեղի է ունենում լուրջ ճգնաժամ: Խոշոր տնտեսություններ ունեցող մի շարք երկրներ արդեն կանգնել են խնդիրների առջև և օժանդակություն ստանալու նպատակով դիմել Արժույթի Միջազգային Հիմնադրամին:

Ենթադրվում է, որ Հայաստանի տնտեսությունը ևս ենթարկվելու է զգալի ազդեցությունների: Զարգացող շուկաներում տեղի ունեցող վերջին իրադարձություններից կարելի է եզրակացնել, որ ճգնաժամի պատճառով տնտեսական իրավիճակի վատթարացումը լինելու է խիստ կտրուկ՝ առանց որևէ նախանշանների դրսևորման: Ուստի և, զեկույցն անդրադառնում է այն հիմնական ուղիներին, որոնց միջոցով, ամենայն հավանականությամբ, գլոբալ անբարենպաստ պայմանները փոխանցվելու են Հայաստանի տնտեսությանը՝ առաջարկելով ՀՀ տնտեսության վրա գլոբալ ճգնաժամի ազդեցության մեղմացմանն ուղղված մի շարք միջոցառումներ, որոնք ներկայացված են ստորև:

Առաջակություններ

Կարողությունների ապահովման ոլորտ

- ՀՀ վարչապետի ուղղակի ենթակայության ներքո ստեղծել ճգնաժամի կասեցման բարձր մակարդակի աշխատանքային խումբ: Այն պետք է կազմված լինի ճգնաժամային իրավիճակներում հայտնված երկրներում աշխատանքի փորձ ունեցող տնտեսագետներից և ֆինանսիստներից և ընդգրկի սփյուռքահայ և արտասահմանցի մասնագետների:

Ֆիսկալ քաղաքականության ոլորտ

- Ճգնաժամի նշանների դրսևորումների ուժգնացմանը զուգահեռ, վերանայել ընթացիկ բյուջեն և կրճատել երկրորդական նշանակություն ունեցող հողվածների ծախսերը (բացառությամբ սոցիալական ծախսերի) և պետական գնումների առկա ձևերի հետ առնչվող կորուստը: Այս ճանապարհով ստեղծված օժանդակ միջոցները, ինչպես նաև արտաքին աղբյուրներից ստացված ֆինանսական հատկացումները պետք է կազմեն արտահանման և սոցիալական օժանդակության ֆիսկալ խթանման փաթեթի մասը:

- Ավանդական հարկային բազայի հնարավոր կրճատումները կանխելու նպատակով ընդլայնել հարկման բազան՝ երաշխավորելով, որ արտոնություններ ունեցող որևէ խոշոր ընկերություն հարկային իշխանությունների հսկողությունից դուրս չի գտնվում:
- Ստեղծել երաշխիքային հիմնադրամ (Guarantee Facility), որի միջոցով հնարավոր կլինի երաշխավորել հատկապես խիստ կարևոր նշանակություն ունեցող ապրանքատեսակների առևտրի անխափան ֆինանսավորումը:

Դրամավարկային և փոխարժեքի քաղաքականությունների ոլորտ

- Փոխարժեքի քաղաքականությունը դարձնել էլ ավելի ճկուն՝ նվազագույնի հասցնելով Կենտրոնական Բանկի միջամտությունները (այսինքն՝ արտարժույթի վաճառքը) արժույթի շուկայում:
- Ուշադիր հետևելով սղաճի տեմպին, աստիճանաբար նվազեցնել տոկոսադրույքները և նվազագույն պահուստային ֆոնդերի պահանջները՝ միևնույն ժամանակ ավելի հասանելի դարձնելով Կենտրոնական Բանկի վարկային և լիկվիդային միջոցները:

Կառուցվածքային քաղաքականության ոլորտ

- Ստեղծել ՓՄՁ-երի վարկավորման մեխանիզմ՝ նպատակ ունենալով առանց խոչընդոտների նպատակային վարկեր տրամադրել հրատապ ֆինանսավորման կարիք ունեցող կենսունակ ՓՄՁ-երին:
- մենաշնորհային գներ սահմանելու խոշոր ներկրող ընկերությունների հնարավորությունները սահմանափակելու ուղղությամբ ձեռնարկել համապատասխան քայլեր:
- Վերանայել տնտեսվարող սուբյեկտների գործունեության վրա ազդող խոչընդոտները և ձեռնարկել համապատասխան հետեվողական քայլեր՝ մոտակա ժամանակում այդ խոչընդոտների որոշ մասի վերացման ուղղությամբ:
- Ամրապնդել/ ընդլայնել սոցիալական ապահովության համակարգը՝ (1) վերանայելով աղքատության ցուցանիշները, (2) ուշադրություն դարձնելով հասարակության սոցիալապես նվազ անապահով խավի վրա (օրինակ՝ այն խավի վրա, որն այսօր արդեն մոտ է աղքատության եզրագծին) և (3) ձեռնարկելով համակարգի ներսում առկա կոռուպցիայի վերացմանն ուղղված քայլեր:
- Վերանայել և բարելավել գործազրկության ապահովագրությունը և օժանդակություն տրամադրել այն անձանց, որոնք իրենց աշխատանքը կորցրել են ճգնաժամի արդյունքում աշխատատեղերի կրճատման կամ փակման պատճառով: